Հաշվետվություն

7- րդ բ դասարանի նախագծային ուսուցման

Ուսուցչուհի՝ Նելլի Հովհաննիսյան

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ ա դասարանի աշակերտների հետ՝

1. Ավագյան Լիա
2. Գաբրիելյան Լիլիա
3. Գինոսյան Մարիանա
4. Գրիգորյան Ֆենյա
5. Հակոբյան Անգելինա
6. Միքայելյան Մերի
7. Հովհաննիսյան Մանվել
8. Գալստյան Արսեն
9. Ոսկանյան Մերի
10. Մկրտչյան Մանե
11. Սարդարյան Եվա
12. Պողոսյան Լիլիթ
13. Մխիթարյան Վիկա

Նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ նախագծային ուսուցում՝ <<Դերենիկ Դեմիրճյանի կյանքն ու <<Ավելորդը>> պատմվածքը>> թեմայով: Մեր նպատակն է եղել ստեղծել վերոնշյալ պատմվածքի գրչագրությունը, պատմվածքի մոտիվներով արտահայտված էջանշաններ:

Նախագծային աշխատանքին նախորդել է վեցշաբաթյա նախապատրաստական շրջան: Սկզբում աշակերտներն ստացել են հանձնարարություններ, այն է՝ հավաքել նյութեր Դերենիկ Դեմիրճյանի, <<Ավելորդը>> պատմվածքի մասին, սովորել պատմվածքի մոտիվներով ներկայացվելիք բեմադրության դերերն ու հերոսների խոսքերը: Այնուհետև

այցելել ենք Երևանում գտնվող Դերենիկ Դեմիրճյանի տուն- թանգարան, ծանոթացել գրողի կյանքի մանրամասներին, ուշագրավ դրվագներին: Նախագծային աշխատանքի ընթացքում աշակերտների հետ գրչագրել եմ պատմվածքը, գրքում տեղ են գտել նաև տեղեկություններ Կարնո բարբառի հնչյունաբանական, շարահյուսական, ձևաբանական առանձնահատկությունների մասին, տեղադրվել են համապատասխան լուսանկարներ, ինչպես նաև Կարնո բարբառով խոսող տարածաշրջանի քարտեզը և բառարանը: Պատրաստվել են էջանշաններ՝ պատմվածքից վերցված տողերով, աստվածաշնչյան Ոսկե կանոնով:

Նախագծային աշխատանքի նշանաբանն է՝ <<Այն ամենը, ինչ կամենում ես մարդիկ քեզ անեն, այդպես դու արա նրանց>>:

Նախագծի պաշտպանության սկզբում աշակերտները ներկայացրին Դերենիկ Դեմիրճյանի կյանքը, ստեղծագործական ուղին , <<Ավելորդը>> պատմվածքի նախապատմությունը: Այնուհետև Կարնո բարբառով, հեղինակային զեղումներով համեմված ձևաչափով աշակերտները բեմադրեցին մեկ հատված ստեղծագործությունից: Սովորողները պատրաստել էին նաև տեսասահիկ՝ լուսանկարներով, ձայնագրություններով և տեսագրություններով:

Պաշտպանությունից հետո աշակերտները պատասխանեցին ուսուցչի կողմից հնչեցրած հարցերին: Այնուհետև ծավալվեց քննարկում, որի ընթացքում տնօրենի, փոխտնօրենի, ուսուցիչների կողմից հնչեցին հետաքրքիր առաջարկներ և գնահատականներ կատարված աշխատանքի վերաբերյալ:

Շնորհակալություն: